

***Երբ տեղի կունենան Էջմիածնի քաղաքապետի արտահերթ ընտրությունները.  
պարզաբանում է Մուկույանը  
18/06/2018  
Մկզբնադրյուր՝***

<http://armtimes.com/hy/article/139617>

Երեկ երեկոյան Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը ֆեյսբուքյան իր էջում հայտարարեց, որ հրաժարական է տալիս իր կամքով: Այս պարագայում ո՞վ պետք է փոխարինի Գրիգորյանին եւ ե՞րբ պետք է անցկացվեն արտահերթ ընտրություններ: Մեր հարցերին պատասխանել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Տիգրան Մուկույանը:

- Պարոն Մուկույան, երեկ Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը հայտարարեց, որ հրաժարական է տալիս, դրանից հետո ի՞նչ գործընթացներ պետք է տեղի ունենան եւ ո՞վ է փոխարինելու նրան, ու ե՞րբ պետք է արտահերթ ընտրություններ լինեն Էջմիածնում:

- Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում, եթե նա հրաժարական է տվել, դրանից հետո համայնքի ավագանին կազմում է համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին արձանագրություն: Նշված արձանագրությունը համապատասխան մարզպետի միջոցով ներկայացվում է ՀՀ կառավարություն եւ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին՝ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարություն:

Կառավարության լիազորված մարմինը համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրությունը ստանալուց հետո 20-օրյա ժամկետում սահմանված կարգով կառավարություն է ներկայացնում տվյալ համայնքի՝ համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն նշանակելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ինչ վերաբերվում է ընտրություններին՝ այստեղ արդեն Ընտրական օրենսգրքի կանոնակարգումներն են: ՀՀ Ընտրական օրենսգրքի 122-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունն անցկացվում է Ընտրական օրենսգրքով սահմանված օրերից այն օրը, որ պահպանվեն ընտրությունների

կազմակերպման եւ անցկացման համար սույն հոդվածով սահմանված ժամկետները: Ընտրությունը նշանակվում է կառավարության որոշմամբ:

Այդ օրերի հետ կապված Ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածը սահմանում է, որ ղեկավարի եւ ավագանու ընտրությունները կարող են անցկացվել տարեկան մինչեւ 4 անգամ: Ղեկավարի եւ ավագանու անդամների հերթական օրերը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է ԿԸՀ-ն

2017 թվականին ընդունվել է որոշում, որ 2018 թվականին ՏԻՄ օրեր են նշանակվել մարտի 11-ը հունիսի 10-ը եւ հոկտեմբերի 21-ը:

- Դա ի՞նչ է նշանակում:

- Այսինքն՝ ՏԻՄ ընտրությունները այս օրերին են անցկացվել, մարտի 11-ին եւ հունիսի 10-ին արդեն անցկացվել են, առաջիկա ընտրությունները հոկտեմբերի 21-ին են:

- Այսինքն, մինչեւ հոկտեմբերի 21-ը ընտրություններ չե՞ն լինելու:

- Ոչ:

- Իսկ ո՞վ է ղեկավարում համայնքը այդ ընթացքում:

- Պաշտոնակատար է նշանակվում:

- Իսկ ինչքա՞ն ժամանակում է արձանագրությունը կազմվում:

- Երբ որ նա հրաժարական է տալիս, ավագանին կազմում է համապատասխան արձանագրություն: Արձանագրությունը կազմելուց հետո ուղարկվում է կառավարություն եւ նախարարություն: Նախարարությունը արձանագրությունը ստանալուց հետո 20-օրյա ժամկետում ներկայացնում է որոշման նախագիծ: Երբ որ հրաժարականի դեպքեր են եղել, ավագանիները արձանագրությունը կազմել, ուղարկել են:

Տեսականորեն, եթե այսօր կառավարությունը կայացնում է որոշում, ասենք 10 օր հետո ունենք նշանակված օր, մեկ օր էլ ասենք նշանակվել է 3 ամիս հետո: Ակնհայտ է, որ 10 օր հետո չեն կարող հասցնել, քանի որ այնտեղ կա առաջադրումների համար նախատեսված ժամկետ, կա քարոզչության համար նախատեսված ժամկետ: Թեկնածուների գրանցման համար փաստաթղթերը պետք է ներկայացվեն առնվազն ոչ շուտ քան 25 եւ ոչ ուշ քան 21 օր առաջ:

Կա նաեւ հանձնաժողովների ձևավորման ժամկետ: Այս ժամկետների պահպանմամբ ակնհայտ է դառնում, որ օրինակ 10 օր հետոյի ընտրությանը չի լինի, բայց 3 ամիս հետոյի ընտրությանը հասցնում են: